ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «03» 06 2025թ
№ 1541-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 1945-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1945-Լ հրամանը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հունիսի «03» -ի

N 1541 -Լ հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՏՈՒՐՔԵՐԻ) ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1034-Ն որոշման 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

Հավելված

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2024 թվականի հուլիսի 30-ի

N 1945-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՏՈՒՐՔԵՐԻ) ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան «——»————— 202—թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը, (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղար _____ -ի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ———— - ը, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա/պետական գրանցման հիման վրա/, (այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» N1034-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 202__ թվականի _____-ի ____-ի «Հայաստանի Հանրապետության 202__ թվականի

պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N _____-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Շահառուն պարտավորվում է կատարել դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում _____ , իսկ Նախարարությունը պարտավորվում է _____ , փորձաքննության վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցումը տրամադրել պետական ֆինանսավորմամբ՝ յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով՝ _____ դրամ՝ հաշվի առնելով Որոշման 4-7-րդ կետերի դրույթները:

1.2 Ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննության վճարների (տուրքերի) 50 %-ի չափով փոխհատուցումը ներառված է Որոշման Հավելված 1-ի 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆինանսավորման գումարի մեջ, քանի որ Որոշման Հավելված 1-ի 4-րդ և 5-րդ կետերում կարող են առկա լինել ռազմավարական նշանակության դեղեր:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունն իրավունք ունի:

2.1.1 Պահանջել Որոշման Հավելված 1-ի 13-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

2.2 Նախարարությունը պարտավոր է:

2.2.1 Պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման գումարը անկանխիկ եղանակով փոխանցել Շահառուի հաշվեհամարին՝ ծրագրի՝ տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

2.3 Շահառուն իրավունք ունի:

2.3.1 Անհրաժեշտության դեպքում ստանալ պարզաբանումներ Որոշման դրույթների վերաբերյալ:

2.4 Շահառուն պարտավոր է:

2.4.1 Պահպանել Որոշմամբ սահմանված պահանջները

2.4.2 Նախարարություն ներկայացնել Որոշման Հավելված 1-ի 13-րդ կետով պահանջվող փաստաթղթերը:

3. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

3.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

5.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը քննվում են ՀՀ դատարաններում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից և ___ էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված վճարների (տուրքերի) կամ ծախսերի գումարի չափն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում այն հաշվարկվում է Շահառուի կողմից վճարի (տուրքի) փաստացի վճարման կամ ծախսի փաստացի կատարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված փոխարժեքով:

6.4 Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ասցե՝ 0010, ՀՀ ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5
ՀՎՀՀ 02698604
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011053536

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղար

_____

(անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն) Կ.Տ

ՇԱՀԱՌՈՒ

_____

(կազմակերպության անվանումը)

Հասցե՝ _____

_____

Հեռ. _____

ՀՎՀՀ _____

_____

(սպասարկող բանկը)

Հ/Հ _____

(բանկային հաշվեհամար)

_____

(կազմակերպության ղեկավարի պաշտոն, անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն) Կ.Տ

»: